

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

(10 սեպտեմբեր 1990 թ.)

Ես ինձ շատ լավ եմ զգում ձեր այս միջավայրի մեջ: Շատ լավ, շատ հարազատ և ոգեշնչված: Նման առիթներով մեր Եկեղեցու կյանքում հավաքույթները սկսում ենք մի կարճ աղոթքով, որ ուզում եմ այստեղ արտասանել, «Տէր Աստուած, զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ»: Այսինքն. Տեր Աստված, մեր ձեռքի գործերը, մեր կյանքի գործերը ուղիղ թող լինեն և մեր ձեռաց գործերը հաջողությամբ պըսակվեն: Ահա այս մաղթանքով ուզում եմ ես իմ խոսքն սկսել, մաղթելու համար, որ ձեր աշխատանքը, ձեր առաքելությունը լինի ուղիղ, արդար, պտղառատ և դաստիարակության նվիրված ձեր գործերը պսակվեն հաջողությամբ:

Ես ողջունում եմ ձեր կրթական այս մեծ հաստատության նոր տարեշրջանը և բերում եմ Ս. Էջմիածնից իմ Հայրապետական օրհնությունը տեսչության, դասախոսական կազմին և ձեզ բոլորիդ՝ սիրելի ուսանողուհիներ և ուսանողներ: Ասացի, որ ես ոգեշնչվեցի ձեր մեջ գտնվելով, և նույնիսկ մի քիչ ինչ-որ չափով երիտասարդացա, և հիշեցի 50 և ավելի տարիներ առաջ իմ ուսանողության շրջանը Ռումինիայում՝ պետական համալսարանում, որտեղ հավաքված երիտասարդներ պատրաստվում էին լինելու մանկավարժներ: Ես այդ ֆակուլտետը ավարտած եմ, մասնագիտություն ունենալով՝ մանկավարժությունը, հոգեբանությունը և ընկերային գիտությունները, որոնք կապակցվում են իրար հետ, և ուրիշ առարկաներ, որոնք երկրորդական էին նկատվում:

Թույլ տվեք ասելու, որ նախանձում եմ ձեզ, նախանձում եմ, որ երիտասարդ եք և պատրաստվում եք սովորելու և ապագա մանկավարժներ դառնալու մեր վերածնվող ժողովրդի դաստիարակության համար: Մեր օրերին արդարացի կերպով ազատության և ինքնորոշման մասին, այնպես, ինչպես հռչակվեց մեր Գերագույն խորհրդում, մեր պառլամենտում: Բայց ուզում եմ ձեր ուշադրության հանձնել, որ այս հռչակումը՝ ազատության և ինքնորոշման, չի վերաբերվում միայն պետության, կառավարության, այլ վերաբերվում է ամբողջ մեր հասարակության, բոլոր քաղաքացիներին, և անձնապես ամեն մեկիդ: Ազատ ու ինքնիշխան լինել՝ սա մարդկային պարծանքներից և մեծ իդեալներից մեկն է, որի համար դարեր շարունակ մարդիկ և ազգու-

թյուններ մաքառել են, զոհվել են: Երկար է մարդկային կյանքի ճանապարհը դեպի ազատություն, դեպի ինքնիշխանություն և դեպի արդարություն: Ավքեր որ ընդհանրապես պատմության ծանոթ են, ու նաև մեր ազգի պատմության, իմանում են ճշմարտությունն իմ ասածների: Բայց ձեր ուշադրության եմ ուզում հանձնել, որ ազատ և ինքնիշխան լինել, այո, պատիվ է և փառք, բայց նաև մեծ պատասխանատվություն: Երբ ուրիշի հրամանով ես ղեկավարվում, դիկտատուրայի պայմաններում, ինչպես որ էր տասնյակ տարիներ շարունակ, քաղաքացիների անձնական պատասխանատվությունը փոքր էր, ամեն մեկը գործում էր հրահանգով, ցուցմունքով, և ամեն մեկը կատարում էր իր գործը առավել կամ նվազ բարեխղճությամբ, երբեմն անտարբերությամբ, երբեմն նույնիսկ ներքին ընդվզումով: Բայց երբ ազատ և ինքնիշխան ենք լինում, այն ատեն կացությունը փոխվում է. ամեն մեկս, ամեն մեկ քաղաքացի լինում է ավելի պատասխանատու իր կատարած գործի նկատմամբ: Այնպես որ, թույլ տվեք ասել, այնքան էլ հեշտ չէ լինել ազատ և ինքնիշխան բառիս իրական, ամբողջական և արդար իմաստով: Այս նոր կացության առաջ ենք գտնվում բոլորս հիմա, երբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց ազատ և ինքնիշխան:

Մանկավարժության հիմնական առաքելությունն է, պատրաստել նոր սերունդ, քաղաքացիներ՝ ազգի ու հայրենիքի համար, որոնք, այո, լինեն ազատ քաղաքացիներ, բայց արդարակորով և բարի նկարագրով, առաքինի նկարագրով: Մանկավարժությունը, մեծ մանկավարժները, մանավանդ վերջին երկու-երեք հարյուր տարիների ընթացքում, Արևմտյան Եվրոպայից, Կոմենյուսից սկսած մինչև մեր օրերը, հանդիպում են երկու նպատակ հիմնականում. նախ՝ երեխաներին, պատանիներին, երիտասարդներին ուսուցանել գիտական տվյալներ, գիտություն ընդհանրապես, ինչ որ մեր բոլոր կրթական հաստատություններում արվում է արդեն, բայց նաև նույնքան կարևոր՝ հետապնդում են կազմավորել նոր սերունդների բարոյական նկարագիր: Եվ պետք է գիտնաք, որ պատմության ընթացքին, գրեթե ամեն տեղ վճռական ճակատամարտները, թե պատերազմի դաշտում, կամ հասարակական կյանքում, վճռական ճակատամարտները շահել են այն ազգերը, այն մարդիկ, որոնք օժտված են եղել ոչ միայն գիտությամբ, այլ նաև բարոյական նկարագրով, հերոսական նկարագրով: Ահա այդ իդեալը, կարծում եմ, պետք է հետապնդենք մենք այսօր, մանավանդ երբ պատասխանատվությունը ունենք ազատ և ինքնիշխան ապրելու: Բնականաբար, ազատություն ասելով պետք չէ հասկանանք անկարգություն, այլ ազատություն բարոյական, ոգեկան օրենքի մը ենթակա: Եվ այդ բարոյական և ոգեկան օրենքը, որին մենք բոլորս պետք է ենթարկվենք, դա մեր ազգի բարօրությունն է, մեր ժողովրդի հառաջդիմությունը, մեր հայրենիքի հզորացումը և մեր ազգի արդար իդեալների իրականացման ձգտումը: Այս բոլորը միասին, կազմում են այն հիմնական հրամայականները, որոնց ներքև պետք է արտահայտվի, գործի մեր ազատ կամքը:

Այստեղ, ուզում եմ մի քիչ խորացնել այս բարոյական նկարագրի կազմավորման հարցը, որ հին հարցերից մեկն է, տակավին հելլենական քաղաքակրթության շրջանից: Իրողությունն այն է, որ մանկավարժը կանգնած է հետևյալ հարցի առաջ՝ ինչպե՞ս գործել, ինչպե՞ս աշխատել որ երեխան, պատանին կարողանա ձեռք բերել այդ բարոյական առաքինությունները, բարոյական նկարագիրը: Սա մեծ հարցերից մեկն է: Ասելը հեշտ է, բայց ինչ-

պե՞ս իրագործել: Որոնք են արդյոք արգելքները, որ հանդես են գալիս: Այստեղ ես կուզեմ հիշել մի մեծ հեղինակ, 18-րդ դարի կեսին՝ Ժան-Ժակ Ռուսոն: Լսած կլինեք նրա անունը: Նա շատ լավատես էր, միամտորեն լավատես: Նա զարգացնում էր այն տեսակետը, որ երեխան ծնվում է անարատ, մաքուր, արդար, և ընկերությունն է, հասարակությունն է, որ նրան փչացնում է կյանքի ընթացքում: Եվ հեղինակը մի վեպի մեջ «Էմիլ» անունով, երևակայում է ինչպես երեխան մեծացվում է հեռու հասարակական կյանքից, հեռու ընկերային հարաբերությունից, բոլորովին մենակ, մի տեսակ Ռոբինզոն Կռուզոյի նման, մի կղզու վրա: Եվ նա կարծում է, Ռուսոն, որ այս երեխան հեռու մնալով հասարակական կյանքից կլինի կատարյալ մաքուր, արդար, ազնիվ մարդ: Սա 18-րդ դարու կարող ենք ասել ռոմանտիկ մոտեցումն էր, որ ազդեցություն գործեց ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսության վրա, հետո սոցիալիզմի վրա սկսած Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից: Սակայն վերջին 100 և ավելի տարիների ընթացքում կատարված գիտական հետազոտությունները, ուսումնասիրությունները մարդկային բանախոսության, և մանավանդ ժառանգականության վերաբերյալ, հերքեցին այդ ռոմանտիկ վարկածը: Մեզնից ամեն մեկը իր մեջ, իր ծնունդից իսկ ընկալյալ կրում է՝ մեզնից առաջ բազում սերունդների տվյալները, տրամադրությունները, հակումները, բնազդները դրական կամ բացասական: Հետևաբար, նաև Էմիլը թեև մենակ դաստիարակվեց, չէր կարող զերծ լինել այդ ազդեցություններից: Այս իմաստով հայտնի հեղինակներ կարելի է հիշել: Հետաքրքրական է հիշել մեկ հայ հեղինակի կարծիքը, այն էլ հոգևորական, այն էլ Կաթողիկոս Ամենայն Հայոց, որի անունը դուք լսած եք իբրև ազգի և հայրենիքի ազատության համար նվիրված մեծ ռահվիրա: Խոսքը կվերաբերի Խրիմյան Հայրիկ Կաթողիկոսին: Խրիմյան Հայրիկը իր «Պապիկ և թոռնիկ»-ի մեջ հետևյալն է ասում մարդու, պատանու վերաբերյալ, նրա հոգու վերաբերյալ՝ «Մարդու սիրտ իբրև երկծորան մի աղբյուր է (մարդու սիրտը երկու ծորաններ ունեցող աղբյուր է). մերթ չարության կբխի, և մերթ բարության»: Տեսեք ինչքան հեռու է Խրիմյանը Ռուսոյի միամիտ տեսակետից: Նա իրապաշտորեն ճիշտ է ճանաչում մարդկային հոգին: Բարին և չարը միախառնվում են ամեն մեկիս գիտակցության և հոգու մեջ: Պետք չէ ինքզինքնիս խաբենք: Ընդհակառակը, պետք է համարձակ լինենք հոգությունը ուղիղ տեսնելու, որպեսզի կարողանանք զանոնք սրբագրել: Ահա այդ սրբագրելու գործին կնվիրվի մանկավարժությունը, դաստիարակությունը ընդհանրապես: Մանկավարժության առաքելությունն է ճանաչել երեխաներին, պատանիներին այնպես, ինչպես նրանք կան, իրենց դրական ու բացասական հակումներով և աշխատել զորացնել նրա մեջ այն, ինչ որ դրական է, այն ինչ ուղիղ ճանապարհի վրա է գտնվում և չեզոքացնել այն, ինչ բացասական է որ տանում է դեպի չարը, դեպի վատը և դեպի այլասերումը: Գուցե չեմ սխալվի, եթե ասեմ թե մեծագույն հեղափոխությունն է, այս մարդը բարեփոխել, վերաշինել, բարեկարգել, դարձնել նրան առաքինի արարած:

Հիմա մենք հայերս, որ գտվում ենք նոր պայմանների մեջ, և խոսում ենք նոր վերափոխությունների մասին, և ինչ որ կատարվում է այս վերջին երկու տարիների ընթացքում, մի հոգեկան փոթորկում է դեպի վերանորոգում, դեպի վերածնունդ, դեպի ինքնաճանաչում, դեպի ազատ ինքնակերտում: Ինչքան այժմեական է մեզ համար, որ մեր ուշադրությունը դարձնենք դեպի մեր պատանիները, դեպի նոր սերունդները, որպեսզի նրանք օժտվեն ոչ միայն

գիտելիքներով, գիտության բարիքներով այլ նաև բարոյական նկարագիրով, քաղաքացիական առաքինություններով, զերծ ամեն հնարավոր թերություններից, տկարություններից և չար արարքներից:

Էլի Խրիմյան Հայրիկից մի մտածում: Երբ ասում ենք կամ մտածում ենք բարոյական նկարագրի մասին, դա նշանակում է խոսել նաև մարդկային խղճի մասին, որովհետև խիղճ ասելով մենք ըմբռնում ենք այն ներքին հոգեկան ձգտումը, հակումը, որ մեզ տանում է դեպի բարի, ազնիվ, արդար նպատակների իրագործում: Անխիղճ մարդը անշուշտ, ոչ մի բարի գործ չի կարող անել, դեպի չարն է գնում նա: Խիղճ ունեցող մարդ, դա կնշանակի բարոյական նկարագիր ունեցող մարդ: Եվ Խրիմյան Հայրիկն ասում է. «Խիղճը հաշվեհարդար մի ոստիկանի նման է, որ իբրև դատավոր, սրտի աթոռի վրա նստած կխայթահարե միշտ»: Շատ գեղեցիկ պատկեր է: Իմ կարծիքով, մանկավարժական պատմության մեջ կարող է փայլուն տեղ գրավել այս մտածումը: Այսինքն, նա՝ խիղճը մեզ կթելադրե սրբագրել մեր սխալները, մեր թերությունները, մեր տկարությունները և լինելու համար կատարյալ, լինել բարոյական նկարագիր ունեցող անձնավորություն:

Սիրելիներ, նաև մեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, դարերի ընթացքում չի ենթարկվել այնպիսի ազդեցությունների, ինչպիսի ազդեցությունների ենթարկվել են այլ Եկեղեցիներ, Եվրոպայում և արևելքում, որոնք տիրապետող ինքնակալ պետությունների, իշխանությունների ենթարկվել են հաճախ և նույնիսկ գործակից դարձել: Մեր Եկեղեցին զերծ է եղել այդպիսի կացություններից, նախ, որովհետև հազար տարիե ի վեր գրեթե ազատ, անկախ պետություն չենք ունեցած, և իր ժողովրդով, տառապել ու հալածվել է, երբեմն նահատակվել և տևապես պահպանելու համար պայքարել է իր ժողովուրդի գոյատևումը և գեթ հարաբերական խաղաղությունը: Որով Հայաստանյայց Եկեղեցին մնացել է ավետարանական ուղիղ ճանապարհի վրա, իր ժողովրդի կյանքը պաշտպանելու, դաստիարակելու, աշխատանքի պայմանները հնարավոր չափով բավարարելու և ներշնչելու մեր ազգի զավակներին ավելի լավ ժամանակների հույս և հավատ, ու ազատ ապրելու երազանքով: Ահա թե ինչու մեր Եկեղեցին գուցե բացառիկ տեղ է գրավում կանգնած լինելով ուղիղ ճանապարհի վրա, ազգային բարոյական դաստիարակության ճանապարհի վրա: Հայոց Եկեղեցին ներշնչվել է միշտ Հիսուսի Ավետարանի պատգամներով, մարդու կատարելագործման ըմբռնումով, մարդ արարածի ազատագրման ըմբռնումով, մարդու ազատագրության երազանքով, բոլոր տեսակի տկարություններից թուլություններից և մեղքերից հեռուն մնալու ուսմունքով:

Հիշեմ Ավետարանից երկու պատգամներ, որ բնորոշում է քրիստոնեական ուսմունքի կեցվածքը այս հարցերի նկատմամբ: Առաջին. «Սիրիր քո ընկերը իբրև քո անձը»: Սա գուցե մի պարզամիտ խոսք է թվում, բայց եթե լավ մտածեք, պիտի տեսնեք, որ հիմնական մտածում մըն է այս՝ սիրիր քո ընկերը իբրև քո անձը: Ընկեր ասելով չենք հասկանում միայն անմիջական ընկերը, այլ ընդհանրապես մեր նմանները, մարդ՝ մարդու նկատմամբ: Այս մեծ պատվիրանը մեծագույն իդեալներից մեկն է այսօր էլ աշխարհի վրա: Եվ երկրորդ, նույնքան կարևոր բարոյական, դաստիարակչական տեսակետից. «Մի անիր ուրիշին այն, ինչ որ չես ուզում, որ ուրիշները անեն քեզ»: Սա էլ պարզունակ է երևում, բայց իր մեջ ամփոփում է ամբողջ ողբերգությունը մարդկային կյանքի, այն բոլոր դժվարությունները, դժբախտություն-

ները, որ տեղի ունենում են կյանքի ընթացքին հետևանք են, որ չի հարգվում այս պատվիրանը: «Մի արա ուրիշին այն, ինչ որ չես ուզում, որ ուրիշները քեզ անեն»: Փորձեցեք, եթե կարող եք:

Սիրելիներ, ես իմ քիչ-շատ մանկավարժական փորձառությամբ, գիտությամբ, ընթերցումներով կարող էի ձեզ շատ ավելի երկար խոսել: Բավարարվում եմ այսքանով, կրկին անգամ շնորհավորում եմ ձեզ: Երանի ձեզ, որ երիտասարդ եք, մարմնով հոգով առողջ և ներգրվում եք դաստիարակչական-մանկավարժական գործին, երանի ձեզ, որ ապագայում պիտի դառնաք մեր նոր սերունդների, վերածնված հայ ժողովրդի, ազատության ու ինքնորոշման ճանապարհի վրա գտնվող ժողովրդի նոր քաղաքացիներ պատրաստելու: Վերջացնում եմ իմ խոսքը մի այլ պատվիրանով, որ ես հիշեցի առաջի օրը հեռուստացույցով իմ ելույթի մեջ, մի հեղափոխական պատգամ Պողոս առաքյալից, որ ասում է. «Դեն գցեք հին խմորը և եղեք նոր զանգված»: Մի պատգամ է բարեփոխման, վերածննդյան, պայծառացման, կատարելագործման: Ահա այս իդեալներով, կարծում եմ, դուք պետք է առաջնորդվեք, մանավանդ մեր օրերին, երբ հիմա ազատ քաղաքացիներ, մեր բոլորիս վրա, ձեզ վրա, ավելի ծանր պարտականություն է դրված, ճակատագրական և բախտորոշ, որպեսզի մենք մեր նոր հայրենիքին, վերածնված մեր ժողովրդին պարգևենք նոր քաղաքացիներ, հին խմորը մաքրվի և դառնան նոր զանգված: Հառաջ ընթացեք հավատով ու լավատեսությամբ: «Հառաջ նահատակ ցեղի անմահներ, ամեն»: